ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դասվար

(առարկա)

ԹԵՄԱ՝ Կարդալու կարողության ձևավորումը

Կազմեց՝ Սոնա Ադամյան Ե.

(անուն, ազգանուն, հայրանուն)

Դավիթ բեկի միջնակարգ դպրոց

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Բովանդակություն

Ներածություն----------3
Գլուխ 1.Կարդալու տարրական կարողության ձևավորումը
1.1 Ընթերցողական կարողությունների ձևավորումը----------4
1.2 Կարդալու հմտությունների երեք փուլերը----------9
Գլուխ 2. Հետազոտական մաս
2.1 Նպատակի համառոտ բնութագիր----------13
2.2 Խելացի նպատակների բաղադրիչները----------14
2.2 Խելացի նպատակ----------15
Եզրակացություն----------18
Օգտագործված գրականության ցանկ----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր թեմայի հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով,

որ հասկանալով կարդալու կարողության մշակումը տարրական դպրոցի մայրենիի դասի գերխնդիրն է: Չպետք է մոռանալ, որ կարդալու կարողության ձևավորումը տարրական դպրոցի նպատակներից է, որը ուսուցման հետագա օղակներում դառնում է գիտելիքների ձեռքբերման միջոց: Իսկ ուսումնառության հիմնաքար է համարվում ընթերցողական կարողությունների ձևավորումը: Երեխաները քիչ են կարդում. հատկապես կրտսեր դպրոցականների համար կարդալու հիմնական միջոցը դասագիրքն է: Այսօր տարրական դպրոցը՝ որպես դպրոցական կրթության կարևորագույն օղակ, իր զարգացման որակական նոր փուլն է ապրում: Դա պայմանավորված է կրտսեր դպրոցականի անձի ձևավորմամբ ու կարողությունների զարգացմամբ: Տարրական դասարաններում մայրենին ներկայանում է որպես երեխայի անձի զարգացումն ապահովող միջոց: Ինչպես Ղ. Աղայանն է նշում, <<Պետք է երեխայի մեջ զարգացնել, ուժեղացնել կարդալու կարողությունը, որպեսզի նա գործադրի այդ ուժը անկախ և ինքնուրույն կերպով: Պետք է շահեցնել երեխային, պետք է զորացնել նրա թևերը, որ նա թռչել կարողանա>>[1]: Աշակերտների կարդալու տարրական կարողությունների ձևավորման, հասկանալով կարդալ սովորեցնելու համար պրակտիկայում գործածվում են բազմաթիվ հնարներ: Այդ գործընթացի մեթոդապես ճիշտ կառուցումը սովորողների մեջ սեր և հետաքրքրություն է արթնացնում դեպի ընթերցանությունը:

Ես կցանկանայի կիսվել Վիգի Խրլոբեանի տված գիտելիքներով, որը ինձ տվեց վստահություն և փորձառություն: Խելացի նպատակների գործընթացն ուսուցչի համար հիանալի գործիք է նպատակների ձեռքբերումները հստակեցնելու և չափելու համար: Այն կենտրոնացած է սանի հաջողությունների ավելացման վրա:

---

[1] Աղայան Զ.,Երկեր,հ. 4, Ե., 1950, էջ 210

ԳԼՈՒԽ 1. Կարդալու տարրական կարողության ձևավորումը

1.1 Ընթերցողական կարողությունների ձևավորումը

Կրթությունը անձի որակական հատկանիշ է: Սովորել ցանկանալը և սովորել կարողանալը եղել և մնում են որպես կրթության գերխնդիրներ: Տարրական դպրոցի գերխնդիրը ոչ թե սովորողներին գիտելիքներով զինելն է, այլ անձի կարողությունների և հմտությունների որոշակի համակարգի և վարքագծային նորմերի ձևավորումը: Իմ կարծիքով տարրական դասարաններում ընթերցանությունը ավելի արդյունավետ կլինի, եթե այն ընթանա բազմատեսակ գործողությունների ընկալմամբ, որոնք հնարավորություն են տալիս աշակերտին դրսևորել իր կարողություններն ու հմտությունները:

Տարրական դասարաններում ուսումնառության հիմնաքար է համարվում ընթերցողական կարողությունների ձևավորումը:

Այն է՝

1. Ճանաչողական, տրամաբանական կարողություններ և հմտություններ՝ գիտելիքներ ձեռք բերել, վերլուծել, մտահանգումներ անել, ընդհանրացնել և համադրել, վերլուծել իրավիճակը և կատարել եզրակացություններ,ինքնուրույն որոշումներ կայացնել և հիմնավորել:

2. Հաղորդակցական կարողություններ

ա) լսել,ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել

բ) բանավիճել,բանավոր և գրավոր խոսք կառուցել

գ) տեղին օգտագործել սովորած տերմինները

3. Համագործակցային կարողություններ՝

ա)աշխատել խմբում, միասնական որոշումներ ընդունել

բ) սովորել և սովորեցնել

գ) դրական հարաբերություններ ստեղծել

դ) սեփական շահը գիտակցելով՝ ճանաչել և ընդունել ուրիշների շահերը

ե) լինել բարեկիրթ, հարգել գործընկերոջ իրավունքը

4. Ստեղծագործական կարողություններ՝

ա) ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները

բ) դրսևորել ստեղծագործական երևակայություն

գ) երևակայել,մտածել և ենթադրություններ անել ապագայի մասին

5. Ինքնուրույն գործունեության կարողություններ՝

ա) գնահատել սեփական ուժերն ու կարողությունները և ըստ այդմ ծավալել ուսումնական աշխատանքային գործունեություն

բ) գիտակցել սեփական գործի կարևորությունը

գ) ճիշտ տնօրինել ժամանակը

դ) զբաղվել ինքնադաստիարակությամբ և ինքնակրթությամբ

ե) կողմնորոշվել տարբեր իրավիճակներում

Ընթերցողական կարողություններ ասելով նկատի է առնվում կարդալու եղանակը (ամբողջական բառերով, վանկերով կամ տառերով), տեմպը (սահունությունը, արագությունը, ճշտությունը) բառերի վերջավորությունների փոփոխություն, վանկերի կրկնություն, բացթողումներ, աղավաղումներ…): Պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր մարդու կարդալու տեմպը խիստ անհատական է և համապատասխանում է նրա խոսակցական լեզվին:

Ընթերցողական կարողությունները ձևավորվում են աստիճանաբար և բնութագրվում են իբրև աշակերտների՝ գեղարվեստական ստեղծագործության բովանդակության մեջ կողմնորոշվելու և խորամուխ լինելու ունակություններ: Դրանք չեն կարող անկախ դիտարկվել, զատվել աշակերտների խոսքային կարողություններից, քանի որ ներքին և արտաքին խոսքն անընդհատ ուղեկցվում է բոլոր այն մտավոր գործեողություններով, որոնք վերաբերում են ընթերցողական կարողություններին: Ընթերցելու հմտություններին տիրապետելը նպաստում է արդյունավետ ուսումնառության բոլոր աստիճաններում: Ընթերցողական կարողություններ մշակելու համար ուսուցիչն անգնահատելի ջանքեր է գործադրում: Հաճախ տառաճանաչ դարձած առաջին դասարանցին կորցնում է հետաքրքրությունն ընթերցելու հանդեպ և այն համարում ամենադժվար ու ձանձրալի աշխատանքը: Ինչպիսի՞ ջանքեր պետք է ներդնի և ի՞նչ վարպետություն բանեցնի ուսուցիչը, որպեսզի կարողանա սեր արթնացնել ընթերցանության հանդեպ և անընդհատ զարգացնելընթերցելու կարողությունը: Իսկ ի՞նչ է նշանակում կարողանալ ընթերցել. կարդալ բառերը,դեռևս չի նշանակում լավ ընթերցել: Այսօր ընթերցանությունն

ընկալվում է ոչ թե որպես սովորելու առարկա, այլ մտածելու և սովորելու գործիք: Այն ներառում է լուռ ընթերցանությունը, մտքերի փոխանակումը ընթերցածի շուրջ, ընթերցվող նյութի հետ կապված տարատեսակ աշխատանքները, ինչպես նաև գրավոր անդրադարձ՝ ընթերցածին: Լավ ընթերցել հասկացությունը ենթադրում է հետևյալ բաղադրիչները.

1.ճիշտ կարդալ

2. հասկանալով կարդալ

3. սահուն կարդալ

4. արտահայտիչ կարդալ

5.արագ կարդալ

Այս հատկանիշների պահպանմամբ՝ ընթերցանությունը պետք է դառնա ակտիվ գործընթաց, որն ստիպում է մտածել ընթերցվող նյութի մասին:

Տարրական դպրոցում մայրենիի դասի գլխավոր նպատակը կարդալ սովորեցնելն է և ընթերցողական կարողությունների ձևավորումը: Ուսուցման սկզբնական փուլում հիմնական ուշադրությունը հատկացվում է հասկանալով կարդալու կարողության ձևավորմանը:Շատ հաճախ աշակերտները չեն հասկանում հենց նոր ընթերցված նյութը: Հարց է ծագում. Ինչպե՞ս կարող է աշակերտը կարդալ ու չհասկանալ իր կողմից ընթերցվածը:Ի՞նչ կարող է անել ուսուցիչը՝ հասկանալով կարդալու կարողություններ մշակելու համար: Թերևս անհրաժեշտ է ընթերցանության մեթոդիկայի իմացությունը: Կարդալը փոքրիկ դպրոցականի համար բարդ գործընթաց է՝ մտածողության, հիշողության, կամքի, ուշադրության և զգացմունքների դրսևորումով: Ընթերցանության մեջ հմտանալու համար փոքրիկը պետք է կարողանա աչքի մեկ ընդգրկումով տեսնել ընթերցանության հիմնական հատվածը:

Եթե ուսուցիչն օգնի աշակերտներին պատկերացնել այն գաղափարներն ու հասկացությունները, որոնց մասին կարդալու են, ընթերցանությունն ավելի հետաքրքիր կլինի: Ուսուցիչը կարող է պարզել սաների գիտելիքները թեմայի մասին՝ անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելով այն աշակերտների համար, ովքեր ոչ բավարար գիտելիքներով են սկսում ընթերցանությունը: Կարելի է նաև աշակերտների ուշադրությունը հրավիրել առանցքային բառերի վրա և շարժել նրանց հետաքրքրությունը: Աշակերտներին բովանդակության պասիվ ընկալողներից գաղափարների ակտիվ կառուցողներ դարձնելը նախ և առաջ նշանակում է հետևել, որ աշակերտներ ոչ թե սոսկ կարդան տեքստը,այլ կիրառեն կարդացածը: Այն օգնում է

աշակերտներին տեքստային նյութերի ընթերցանությունն ավելի արդյունավետ դարձնել: Շատ կարևոր է նաև բարձրաձայն ընթերցանությունը: Կարդալու հմտությունն առավելագույնս ձևավորվում է բարձրաձայն ընթերցանությամբ, որը նպաստում է կարդալու կարողությունների մշակմանը: Այս տեսակետից մեծ առավելություն ունեն դասագրքերը,որոնց պահանջները պարտադրում են աշակերտներին կարդալ բարձրաձայն,նույնիսկ այն ժամանակ, երբ մենք չենք պահանջում: Ընթերցանությունն անմիջականորեն ազդում է արտասանական կարողությունների ու հմտությունների ձևավորման ընթացքի, բանավոր խոսքի զարգացման վրա:

Մանկավարժական գիտությունների դոկտոր Ջ. Գյուլամիրյանը մեծ տեղ է տվել հասկանալով ընթերցելուն՝ ասելով «Բնագրի դյուրին ու հասկանալով կարդալու հետ անմիջականորեն կապված են[2].

1. Նախադասության կազմի մեջ մտնող բառերի երկարությունը: Գիտությունն ապացուցել է, որ կարճ բառերով և ոչ մեծ նախադասություններով տեքստերը տարրական դպրոցի երեխաներն ավելի սիրով են կարդում:

2. Բնագրի դյուրին ընթերցումը կապված է նրա մեջ օգտագործված բառերի՝ աշակերտների ծանոթ լինելու աստիճանից , նաև բառապաշարի բազմազանությունից»: Բարձրաձայն ընթերցանությունը սկսնակ ընթերցողին օգնում է տառային նշանների իմաստավորված ընթերցելուն: Այստեղից երևում է, որ սկզբնական շրջանում երեխաներին պետք է սովորեցնել բարձրաձայն, ապա աստիճանաբար անցնել մտքում կարդալուն: Լուռ և բարձրաձայն կարդալու կարողությունը, կարդալու որակական բոլոր հատկանիշների տիրապետումն ուսումնասիրվող ստեղծագործության լիարժեք ընկալման կարևոր պայման է : Ընթերցողական գործունեության կարողություններն ու հմտությունները կապահովեն ստեղծագործության ընկալմանը: Սրա հիմքում տեքստի շուրջ կազմակերպվող համակողմանի աշխատանքն է , որի արդյունքը կլինի յուրաքանչյուր աշակերտի ընթերցողական կարողությունների զարգացումը: Երեխայի կարդալու կարողությունը կարելի է բնութագրել հետևյալ կերպ. <<Գիտեմ, հասկանում եմ, կարող եմ >>: Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել կարդալու ընթացքում կրտսեր դպրոցականի որակական հատկանիշների պահպանմանը՝ ճիշտ հասկանալով, գիտակցաբար, արտահայտիչ, ստեղծագործական մոտեցմամբ, ընկալման ամբողջականությամբ և այլն:

---

[2] Ջուլիետա Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա:

1.2 Կարդալու հմտությունների երեք փուլերը

Կարդացածի իմաստի ընկալումը կարդալու գործընթացի շարժիչ ուժն է: Կարդալու հմտությունները ձևավորվում են երեք փուլով.

1. Վերլուծական		2. Համադրական		3.Ավտոմատացված
1. Տեսական ընկալման միավորը տառն է կամ վանկը: 2. Ընկալման տեսադաշտը սահմանափակ է: 3. Կարդացածի հասկացումը հետ է մնում արտաբերումից: Վանկերը միացնելու և բառերը կարդալու համար շատ ժամանակ է պահանջում: 5. Առաջին վանկը կարդալուց հետո աշակերտը փորձում է գուշակել բառը: Գուշակելու այս ձևը հասկանալով կարդալու ձգտման արդյունք է:		1. Կարդալու ամենափոքր միավորը դառնում է բառը: 2. Շարունակում է զարգանալ գուշակման գործընթացը: 3. Աշակերտն ունի նախապես ընթերցված բնագրում կողմնորոշվելու հնարավորություն, բառերը փոխարինում է իմաստով մոտ այլ բառերով: Գուշակելու այս ձևը սահուն կարդալու ձգտման արդյունք է:		1. Կարդալու ամենափոքր միավորը դառնում է նախադասությունը: 2. Բնագրի որոշակի հատվածն ընկալվում է ավելի արագ, քան արտաբերվում է: 3. Կանխագուշակման հավանականությունը դառնում է անսխ Այս փուլում աշակերտները սահուն կարդում են

Առաջին դասարանում սովորող աշակերտի համար տեսողական միավորը տառն է կամ վանկը,որի ընթացքում կարդացածի նշանակության ընկալումը շատ թույլ է: Աստիճանաբար գիտակցում է բառը, ապա նախադասությունը: Այս դեպքում արդեն մեծանում է ընթերցածի ընկալման հավանականությունը, որից շահում է աշակերտը:Աշակերտներին հասկանալով կարդալ սովորեցնելու համար արդյունավետ է կանգառներով ընթերցանությունը, զույգերով մեկնաբանելը և այլն:

Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել կարդալու ընթացքում աշակերտի որակական հատկանիշների պահպանմանը՝ ճիշտ հասկանալով, գիտակցաբար,

արտահայտիչ, ստեղծագործական մոտեցմամբ, ընկալման ամբողջականությամբ, բնականոն տեմպով: Լ.Ն.Տոլստոյն ասել է. « Որպեսզի երեխաները կարդալ սովորեն, պետք է սիրեն կարդալը, իսկ որպեսզի նրանք կարդալը սիրեն, պետք է կարդացածը լինի հասկանալի և հետաքրքրաշարժ»: Իսկ Գ.Էդիլյանն ասել է. «Գեղեցիկ կարդալ նշանակում է կարդալիս ձայնի պարզություն, ուժեղություն, արագություն, շեշտերի, դադարների, հնչերանգի վրա ուշադրություն դարձնելը»:

Ավանդաբար՝ ընթերցելու կարողության զարգացման հիմնական ձևերից է համարվել տեքստի շուրջ տարվող բազմաթիվ առաջադրանքների կատարումը: Այս ընթացքում աշակերտը բազմիցս վերընթերցում է տեքստը: Այդպիսի առաջադրանքներից են.

1. տեքստի ամբողջական ընթերցանություն

2.մասերով հատվածներով ընթերցանություն

3.պլանով ընթերցանություն

4.մեկնաբանություններով ընթերցանություն

5.համառոտակի ընթերցանություն /ընթերցելիս աշակերտները բաց են թողնում «ոչ էական» նախադասություններ ու բառեր

6.պարբերություններով ընթերցանություն

7.շշուկով ընթերցանություն

8.նկարազարդումներին համապատասխան հատվածների ընթերցանություն,

9.ընտրովի ընթերցանություն

10.տեքստի վերլուծություն՝ ընթերցելով համապատասխան հատվածները

11.դերերով ընթերցանություն՝ անտեսելով նաև հեղինակի խոսքերը

12.ոչ խոսքային միջոցներով՝ տեքստի բովանդակության վերարտադրում
13.ընթերցանություն՝ քերականական առաջադրանքների կատարմամբ
14.վանկատելով ընթերցանություն

15.համատեղ ընթերցանություն/շարքերով,խմբերով/ և այլն:

Ուսուցիչը իր ամբողջ աշխատանքի ընթացքում՝ ընթերցանության ուսուցման մեթոդական այդ բոլոր քայլերի իրականացումից հետո անգամ նկատում է, որ ընթերցանությունը չի վերածվել ակտիվ գործընթացի: Առաջին հայացքից թվում է, թե

բոլորովին բարդ չթվացող ընթերցվող նյութերի հիմնական իմաստը,սակայն,

դրանցում տեղ գտած գաղափարներն ու հասկացությունները չեն ընկալվում կողմից: Պարզվում է, որ երեխաները, տիրապետելով բառաճանաչողության հմտությանը, չգիտեն,թե ինչպես կարդան, որ կենտրոնանան մտքերի վրա: Պատճառը պարզ է. վատ ընկալողները պարզապես ուշադիր չեն կարդում: Ուսուցչի կողմից բազմիցս կրկնվող հրահանգները («Եղիր ուշադիր», «Կենտրոնացիր», «Մտածիր») գրեթե արդյունք չեն տալիս, և աշակերտի գործադրած ջանքերն անարդյունավետ են, ուստի ցուցադրում են միայն ընթերցանության արտաքին կողմը:

Ընթերցանությունը դառնում է ակտիվ գործընթաց,երբ աշակերտը մտածում է կարդացածի բովանդակության մասին: Ընթերցելիս աշակերտի միտքը դեգերում է շրջապատի տպավորությունների դաշտում, և արդյունքում չի ընկալվում կարդացածի իմաստը: Ընդ որում,առկա են ապակենտրոնացման բազում պատճառներ՝ անուշադրությունը , ընթերցվող նյութի անհետաքրքիր կամ անհասկանալի լինելը, աշակերտի անձնական առանձնահատկությունները, միջավայրը և այլն Չափազանց կարևոր է ընթերցվող նյութի ճիշտ ընտրությունը: Այն պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին:Այդ կերպ ընթերցանությունը հիմք կհանդիսանա կայուն գիտելիքների հաղորդման,դասի նպատակին համապատասխան կարողությունների և հմտությունների մշակման համար: Կարևոր են նաև դիպուկ,նպատակային հարցադրումները,որոնք կենտրոնացնում են աշակերտների ուշադրությունը և խթանում մտածողությունը: Միաժամանակ նրանց համար հնարավորություն է ստեղծվում բացատրելու իրենց գաղափարները, արտահայտելու կարծիքներ, ներկայացնելու նաև չիմացածը:

Լուրջ ջանքեր պետք է գործադրի փոքրիկ աշակերտը՝ կարդացածի միտքն ու **իմաստն ընկալելու** համար: Այստեղ էլ հենց կարևորվում են ուսուցչի մեթոդական պատրաստվածությունը և աշխատանքների **նպատակային պլանավորումը**: Ուսուցման վաղ տարիքից և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները պետք է գիտակցեն, որ ընթերցանությունը միջոց է՝

1.անձի դաստիարակության

2.ընդհանուր զարգացման

3.գիտելիքների ձեռքբերման

Այն պետք է՝

1. դառնա ուսումնական բոլոր առարկաների պահանջների յուրացման հիմք
2. մշակի ինքնուրույն ընթերցանության կարողություններ և հմտություններ

3. հետաքրքրություն առաջացնի գրքի նկատմամբ

4. հետաքրքրություն առաջացնի գրքի նկատմամբ

5. հետաքրքրություն առաջացնի գրքի նկատմամբ

Եթե ուսուցիչն աշակերտից պահանջում է ընդամենը վերհիշել ու վերարտադրել իրենց կարդացածը,ապա երբեք չի կարողանա պարզել, թե տեքստի ինչպիսի մակարդակի ընկալում է տեղի ունեցել: Տպագիր բառերը կարդալը և մտապահելը դեռևս ակտիվ ընթերցանություն չէ: Որպեսզի կարդացածն օգտակար լինի, դրա արդյունքում ընթերցողի իմացական ոլորտում փոփոխություններ պետք է տեղի ունենան: Ուսուցիչների առաջնահերթ խնդիրն է դառնում օգնել աշակերտներին՝ զարգացնելու ակտիվ ընթերցողական կարողություններ:

Փորձենք հստակեցնենք, թե ով է լավ ընթերցողը՝

1. Լավ ընթերցողը հետապնդում է հատուկ **նպատակներ**՝ ինչի համար է ընթերցում տվյալ նյութը:

2. Լավ ընթերցողը մինչ կարդալը կատարում է կանխագուշակումներ՝ ելնելով վերնագրից կամ նկարազարդումներից՝ կռահում է նյութի բովանդակությունը:

3. Լավ ընթերցողը կարողանում է կարդացածը մտովի պատկերացնել՝ հենվելով սեփական իմացության և հեղինակի կողմից տրված տեղեկատվության վրա:

4. Լավ ընթերցողը կարողանում է իմացածը զուգորդել ընթերցածի հետ և կառուցել նոր իմացություն:

Արտահայտիչ կարդալը գեղեցկացնում է լեզուն, խոսքը դարձնում է պատկերավոր, նպաստում է նյութի ըմբռնմանը, բարձացնում է աշակերտների գեղագիտական ճաշակը:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

2. 1 ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Օգտագործելով խելացի նպատակների ձևաչափը, այն ուսուցչին կօգնի յուրաքանչյուր աշխատանքային տարի ունենա իր նպատակը: **Խելացի նպատակների** գործընթացն ուսուցչի համար հիանալի գործիք է նպատակների ձեռբերումները հստակեցնելու և չափելու համար:

Ես կիրառեցի այս գործիքը 2-րդ դասարանի սաներիս ընթերցանության և հասկանալով ընթերցանության որակը բարելավելու համար: Այս գործընթացի ժամանակ զգում ես աշակերտների ընթերցանության որակի բարելավումը:

Խելացի նպատակները արդյունքներին են միտված և շեշտը դնում են ձեռքբերումների արդյուքների վրա և ոչ թե ծրագրի, քաղաքականությունների կամ գործընթացների ձեռքերումները ավելացնելու վրա: Խելացի նպատակները կարող են ներառել և ցանկալի արդյունքը և ցանկալի գործընթացը

2. 2 Խելացի նպատակների բաղադրիչները

S - Հստակ փոփոխություն

M - Չափելի փոփոխություն

A-Համապատասխան և իրատեսական վերջնարդյունք

R - սանի հաջողության վրա հիմնված վերջնարդյունքի վրա հիմնված

T - ժամանակացույցով

• Հիմնված է սանի ձեռքբերումների վրա

• Ձեր սաների համար նախատեսված ուսումնառության վերջնարդյունքների վրա

• Խելացի/SMART նպատակը հետևյալն է.

Հստակ S (խնդիրը հստակեցված է)

Չափելի M (գնահատման գործիք է օգտագործվում)

Համապատասխանություն A (ուսուցչի ուժերի շրջանակներում է փոփոխություն կատարելը, արժանի է ուշադրության)

Իրական է R (շոշափելի է ուսուցչի համար)

ժամանակացույց T (նախատեսված է մեկ ուսումնական

տարվա համար)

2.3 ԽԵԼԱՑԻ ՆՊԱՏԱԿ

S – Հստակ փոփոխություն

- 2- րդ դասարանի սաների 75% կգերազնցի նախատեսված չափորոշիչը մայիսին:
- Դասապատրաստումը վերջացնելուց հետո զբաղվել ընթերցանությամբ:

M – Չափելի փոփոխություն

Ստուգել ամեն օր: Աշակերտների հետ կազմել <<Մատնահետքի պաստառ>>, գրել անուն ազգանունները և այունակի վերևում նշել շաբաթվա օրերը: Ամեն առավոտյան՝ մինչ դասը սկսելը՝ <<Արա հիմա >>, որպես ստուգում բոլոր աշակերտները կկատարեն ջրաներկով մատնահետքի նշում: Ով չի կարդացել, նշում չի կատարում տվյալ օրվա դիմաց(այս քայլով սաների մոտ դսևորվում է ազնվություն) :

A – Հասանելի գործողություն և իրատեսական վերջնարդյունք

Ամեն շաբաթվա ուրբաթ օրը՝ ընթերցանության ժամին սաները մասերով ընթերցեցին անծանոթ տեքստը և ըստ 2-րդ դասարանի ընթերցանության ստուգաթերթի կատարեցի աստաղանիշով նշում համապատասխան ձեռքբերման համար: Եթե չի համապատասխանում, նշում չի կատարվում: Ըստ այդ տվյալների կարողացա յուրաքանչյուր սանի բացթողումները և ձեռքբերումները արագ նկատել: Սանի բացթողումների շուրջ համապատասխան աշխատանքներ անելով և՛ դպրոցում, և՛ տանը, դրանով ավելի մոտեցա իմ նպատակին: Նման աշխատանքները պետք է կատարի դասարանի 100%-ը : Այս գործընթացը կլինի երկու շաբաթվա ամփոփումով:

R - Սանի հաջողությունը հիմնված իրատեսական վերջնարդյունքի վրա

Սաների հետ մտածեցինք և յուրաքանչյուրն ընտրեց գունավոր շապիկներից մեկը՝ իր անունով: Շապիկի վրա ամեն շաբաթվա վերջում յուրաքանչյուր սան տեսավ իր վերջնարդյունքն՝ուրախ սմայլիկների տեսքով և ստուգաթերթում նշված աճով/կամ նվազումով/:

T – Ժամանակացույց

Այս աշխատանքը նախատեսված է մեկ ուսումնական տարվա համար, որի արդյունքում սաները գերազանցեցին արագ ընթերցելու տարեկան չափորոշիչը:


5 - 2 = 3
4 = 3

5 - 2 = 3
4 = 3


5 - 2 = 3


ԱԶԱՅՆԱԳԻՐ
5 - 2 = 3
4 = 3

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳ
ՄԱՏԵՂԻԼ, 2-րդ դասարան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ես հանգեցի այն եզրակացությանը, որ տարրական դասարաններում աշակերտների կարողությունների և հմտությունների զարգացմանը շատ է նպաստում ընթերցանությունը:

Օգտագործելով տարաբնույթ հնարներ, մեթոդներ ու ակտիվ վարժություններ՝ ուսուցիչներիս խնդիրն է ձևավորել այնպիսի ընթերցողներ, որոնք կարողանան կարդալու ընթացքում ձեռք բերած գիտելիքները իմաստավորել, օգտագործել, զարգացնել ակտիվ և խոհուն ընթերցող լինելու կարողություն: Հարկավոր է սովորեցնել նաև կարդալ՝ սոսկ բավականություն ստանալու համար: Պետք է հասնել այն բանին, որ պարզունակ մտապահման փոխարեն աշակերտները տեքստը ենթարկեն քննության և կատարեն բազմաբնույթ առաջադրանքներ:

Իմ փորձից հասկացա, որ խելացի նպատակը արդյունքին է միտված և շեշտը դրվում է ձեռքբերումների վրա և ոչ թե ծրագրի, քաղաքականությունների կամ գործընթացների ձեռքբերումներն ավելացնելուն վրա: Այս գործիքի կիրառման ժամանակ զգում ես ձեռքբերումների ուրախությունը, որը խրախուսում է քեզ

շարունակել ջանքերդ նպատակիդ հասնելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Ղ., երկեր, հ.4. Ե., 1950, էջ 210

2. Ջուլիետա Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա:

3. Ռոջեր Ֆար,Մտածողության ստրատեգիաների զարգացում:

4. Ա.Ս.Կոզարևա,Տեքստի վրա աշխատելու ձևերը:

5. Կարինե Թորոսյան, «Ընթերցանության դասերի կատարելագործման ժամանակակից պահանջներ» /Նախաշավիղ 1/2001/:

6. Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով,/Ուղեցույց 7-րդ/: